Մամլո հայտարարություն
Պրն. Մուրիլո Պորտուգալի Հայաստան կատարած այցի վերջում
2008թ. նոյեմբերի 21–22

Արժույթի միջազգային հիմնադրամի կառավարչի տնօրենի տեղակալ պրն.Մուրիլո Պորտուգալը Երևանում այսօր՝ իր Հայաստան կատարած այցի վերջում, արել է հետևյալ հայտարարությունը.

«Ուրախ եմ, որ առաջին անգամ գտնվում եմ Հայաստանում: Այցիս հիմնական նպատակն էր մասնակցել դրամի 15-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին:

Այցիս շրջանակում պատիվ եմ ունեցել հանդիպելու Հանրապետության նախագահի և վարչապետի, ինչպես նաև Ֆինանսների նախարարի, Կենտրոնական բանկի նախագահի, կառավարության և խորհրդարանի մյուս ներկայացուցիչների հետ: Մեր քննարկումները շատ արդյունավետ են եղել և կցանկանայի շնորհակալություն հայտնել Հայաստանի իշխանություններին՝ իրենց ջերմ ընդունելության և գերազանց հյուրընկալության համար:

Ես շատ տպավորված եմ վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի տնտեսության կատարողականով: Հայաստանում ապահովվել է ՀՆԱ-ի բարձր աճ, ցածր գնաճ և աղքատության էական կրճատում:

Ուրախ եմ նկատել, որ տնտեսության բարձր կատարողականը պահպանվել է վերջին ամիսների ընթացքում, երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը խորացել է: Հայաստանի վրա ճգնաժամի ազդեցությունը սահմանափակ է եղել:

Հայաստանի բանկային համակարգը շարունակում է լավ կատարողական դրսևորել: Ֆինանսական կայունության ցուցանիշներում էական խոցելի կողմեր չեն բացահայտվում: Բանկային ոլորտի շարունակում է լինել շահութաբեր և լավ կապիտալացված, չաշխատող վարկերի ցուցանիշը ցածր է, իսկ իրացվելիության ընդհանուր մակարդակը մնում է բավարար: Շարունակվում է բանկերի՝ միջազգային ներդրողներից կապիտալ ներհոսքերի ստացումը:

Դրամական փոխանցումները բավականին արագ են աճել: Քանի որ նշված ներհոսքերը հիմնականում ստացվում են Ռուսաստանից, դրամական փոխանցումների շարունակական աճը Ռուսաստանի տնտեսական զարգացումների հետ սերտորեն կապված կմնա:

ՕՈՒՆ-ի կայուն ներհոսքերը ևս պահպանվել են, իսկ նախատեսված ներդրումային որևէ ծրագրի դադարեցման նշաններ չկան:

Հայաստանի սպառողների համար սննդամթերքի և նավթի ներմուծման գների նվազումը պետք է շահավետ լինի: Միևնույն ժամանակ, Հայաստանից ոչ թանկարժեք մետաղների արտահանումը կարող է տուժել միջազգային գների նվազման հետևանքով:

ԱՄՀ-ն գոհ է, որ վերջին մի քանի տարիների ընթացքում կարողացել է օժանդակել Հայաստանի տնտեսական բարեփոխումների ծրագրին, և մենք դա շարունակելու ենք անել: Նոյեմբերի 17-ին ԱՄՀ Գործադիր խորհուրդը հաստատել է Աղքատության կրճատման և տնտեսական աճի ծրագրի շրջանակում ԱՄՀ նոր եռամյա ծրագիրը: Նոր ծրագրի շրջանակում Հայաստանն իրավունք կունենա 9.2 միլիոն ՀՓԻ (SDR) կամ շուրջ 14 միլիոն ԱՄՆ դոլար ներգրավել առաջիկա երեք տարիների ընթացքում՝ 0.5 տոկոս տարեկան տոկոսադրույքով: Ծրագրի հիմնական նպատակն է ազդարարել Հայաստանի մակրոտնտեսական քաղաքականությանը և կառուցվածքային բարեփոխումների ծրագրին ԱՄՀ-ի շարունակական աջակցությունը երկրի՝ զարգացող շուկայական տնտեսության կարգավիճակի անցման ընթացքում՝ դրանով իսկ հեշտացնելով Հայաստանի ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը:

Ինձ քաջալերել են երեկ և այսօր կայացած հանդիպումները: Ես զգացի, որ առկա է բարեփոխումների սեփականատերը լինելու վճռականություն, ինչը լավ է Հայաստանի տնտեսական հաջողությունը պահպանելու համար: ԱՄՀ-ն պատրաստ է Հայաստանին օգնել բարեփոխումների ծրագրի իրականացման հարցում՝ քաղաքականության վերաբերյալ և տեխնիկական խորհրդատվությամբ, ինչպես նաև ֆինանսական օժանդակությամբ: Իշխանություններին հաջողություն եմ մաղթում իրենց այս ձեռնարկման մեջ»: